

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱԾՆՈՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թերթելով հայոց և վրաց մատենագիրներ՝ մեծագոյն մասը, մենք քաղեցինք նորչալուի գաւառին վերաբերեալ պատմական տեղեկութիւնները, որոնց ամենաշնչին մասն է վերաբերում ժողովրդի կուլտուրական զարգացման, այնպէս որ այս նիւթերով անհնարին է գաւառիս բնակիչների կուլտուրական զարգացման մասին մի աղօտ զաղագիր անգամ կազմեր: Նիւթերի մեծ մասը պատերազմների և հերոսների նկարագրութիւններ են, միմեանցից բոլորովին անկախ, անկապ պատմուած: Ռւստի և մենք աշխատեցինք կազմել գէթ այս, քաղաքական ասպարէզում նշանաւոր դարձած տոհմերի, հարստութեան. պատմութիւնը, բաց այսուեղ էլ մեծ դժուարութիւնների պատահեցանք, որովհեակ նշանաւոր անցքերի. անձերի մէջ բաւական մեծ անջրպես է մոնում. մատենագիրները յիշել են նշանաւոր անցքերն ու անձնաւորութիւնները, բաց նրանց լաջորդութեան վրայ ոչ մի ուշադրութիւն չեն դարձնել: Ստիպուած աշխատեցանք զոնէ տալ Գուղգարաց բղեշխութեան, Կիւրիկեան թագաւորութեան և Սպասալարների տոհմի պատմութիւնը, իսկ մնացած դէպքերը, որոնք առաւելապէս վերաբերում են գաւառիս բնակիչների ուրիշ տեղեր և կամ ուրիշ երկիրներից այսուեղ զալթելուն, որպէս ազգաբնակութեան շարժման գործններ, տեղաւորեցինք ազգաբնակութեան բաժնում, ուր և կըպատմենք այն մի քանի մելիքական տների մասին, որոնք առաջնորդել են ժողովուրդներին գաղթելիս և միաաժամանակ կառավարել են նրանց հաստատուելուց յետոց:

Իսկ ինչ վերաբերում է եկեղեցու և մանաւանդ Սանահնի և հաղբատի վանքերի կատարած կրօնական, հասարակական դերին, այդ ամփոփ կերպով կըտանք վանքերի նկարագրութիւնից յետոց:

## ԳՈՒԳԱԲՐՈՑ ԲԴԵՃԽՈՒԹԻՒՆ

Նորչալուի գաւառին վերաբերէալ ամենահին տեղեկութիւնները, բացի մի քանի հատ ու կտոր անցքերից, չեն անցնում հայոց Վաղարշակ թագաւորի (148—127) ժամանակից և առաւելապէս վերաբերում են Գուղգարաց բղեշխութեան:

Մովսէս Խորենացու ասելով Վաղարշակ թագաւորը բաժանել է

Գուգարքը հարացի որդիներից յառաջացած Գուշարի և սրա սերունդների մէջ, Գուգարքի հարաւալին մասը՝ Տաշիրը (Լոռին) տուել է Գուշարի սերունդներին, Զաւախսքի կէսը, Կանգարքը, Կողըը, Մորը, Չորը մինչև Հնարակերտ ամրոցը՝ իրեն Գուշարին, հիւսիսացին և արև մտա – հիւսիսացին մասը (Ծրբահան, Կղարջք, Թուեղք և Զաւախսքի կէսը) յանձնել է Վրաստանի կառավարիչ Միհրդատին, տալով նրան Բդեշխ Գուգարաց տիտղոսը: Եւ որովհետեւ Գուգարքը կազմում էր Հայաստանի հիւսիսացին սամանացին նահանգը, և իր ճանապարհ էր Ճառացում թէ հիւսիսից հարաւ և թէ հարավից հիւսիս գաղթող ժողովուրդների ուստի և Գուգարաց բդեշխը, միւս երեք բդեշխների հետ միասին, սահմանակալ գօրապետ և թագաւորի խորհրդարանի «քարձերէց», «գահերէց» անդամը դարձաւ, ինչպէս վկայում են Սգաթանգեղոս (82թ. գլ.) և Բիւզանդ (Գ. 10):

Օրտաշէս Ծ (127—114) ժամանակ Գուգարաց բդեշխի իշխանութիւնն աւելի մեծացաւ, որովհետեւ Օրտաշէսը իւր Օրտաշամահ դուստրը տուեց «Միհրդատայ ումեմն, վրաց բդեշխի մեծի... և հաւատայ սմա զկողմնակալութիւն հիւսիսացին լերանցն և Պոնտոս ծովու» \*):

Միհրդատից յետոյ յայտնի չէ, թէ ով է կարգւում Գուգարաց բդեշխ, որովհետեւ Օրտաշէս Բ.-ի թագաւորութեան (85—131) պատմութիւնը շատ թերի է, և հայու օստար մատնագիրների ասածները միմեանց անհամապատասխան: Նոյն իսկ վրաց «Քարթլիս Ցխովլէրան», նկարագրելով Փարնաջում թաղաւորի պատերազմները Տաշիրում, ուր ասպաստանած էին վրաց էրիստաւները և հայերից էլ օգնութիւն էին ստացել. ոչ մի խօսք չի ասում Գուգարաց բդեշխի մասին: Միևնույն լուութիւնը պահպանուում է այս բդեշխի մասին, երբ Նըրուանդ Բ.-ը (65—85) ջարդելով վրաց Փարսման թագաւորի գօրքերը, տիրում է մինչև Կուր գետը, առնում է Ծունդան (Զաւախսքում), բնակեցնում այնտեղ քաջ մարդիկ և վերակոչում է «Քաջաց տուն»: Միհայն Օրտաշէս Բ. ժամանակ, երբ Սմբատ Բաղրատունին կրկին տիրապետում է այս կորմերին, Գուգարքի բդեշխ և սահմանակալ գօրապետ նշանակում է թագաւորի որդի Զարեհը. և որովհետեւ սա վատ պատերազմող էր, ուստի վրաց Քարձամ թագաւորն ապստամբեցնում է նրա հպատակներին, և Զարեհին բռնելով բանտարկում է: Բայց Օրտաւազդ, Տիրան և Սմբատ բդեշխները միասին յս բակում են վրաց և ազատում Զարեհին բանտից և գերութիւնից \*\*):

Քարթլիս Ցխովլէրայում այս միևնույն անցքը՝ այս կերպ է

\* ) Մովսէս Խոր.

\*\*) Խոր. Բ. գլուք. գլ. ՄԴ.

պատմւում. Հռովմէացիների և պարսից մէջ ծագած պատերազմի ժամանակ հայոց զօրքը, թագաւորի երկու որդէների և Սմբատի հետ պատերազմում էին պարսից դէմ: Վրացիներն ու օսերը բազմացրին իրենց յարձակումները ի վճառ հայաստանի, Երտաշան թագաւորը հաւաքեց իւր մնացած զինուորները և յանձնելով իւր որդի Զարենին ուղարկեց վրացիների դէմ: Սրանք և սրանց դաշնակից օսերը դնացին նրան պատահելու հաւախքում. պատերազմնեցին նրանց հետ, Զարենը յաղթուեց, փախաւ, զօրքը ցրուեց. Նրանց հետևեցին մինչև հայաստանի սահմանը Զարենը, թագաւորի որդին, զերուեց Ցիլ լճի ափին: Օսերը կամենում էին նրան սպանել, իբր վրէժինդրութիւն իրենց թագաւորների արեան, բայց վրացիներն ազատեցին նրա կեանքը, իրենց սահմանները նրանով վերագնելու համար. և նրան Դարիալան ամրոցում բանտարկած պահեցին: Հայերը պարսից պատերազմով զրադուած լինելով՝ չկարողացան վրէժինդիրինել, Բայց երեք տարուց յետոյ Սմբատ հեւրիտեանը թագաւորի երկու որդիների, Արտվագ և Տիգրանի հետ և հայաստանի բոլոր զօրքով գուրս եկան պատերազմի: Վրաստանի թագաւորները հրամացեցին փախչել ամուր քաղաքները, հայերը բանակ դրին Խորիսլէթում և ոկտեցին բանակցել: Վրացիները դաշն կապեցին, վերադարձրին գերի ար բայորդուն, դաշնակից դառան և խոստացան Օրտաշանի անունով և պատկերով զըրամ կտրել. Խակ հայերը վերագարձրին Ծունդան, Ջաւախէթը, և մի քանի ուրիշ ամրութիւններ \*):

Սրանից յետոյ էլ պատմութիւնը յուռմ է Գուգարաց բգեշխների մասին մինչև 321 թուականը, երբ Տրդատ թագաւորը հայաստանը բաժանելով չորս զինուորական շրջանի, հիւսիսայինը յանձնեց վրաց թագաւոր Միհրանին, որի որդին ամուսնացած էր լւսեր հետ. Սա միաժամանակ և կրում էր բգեշխ Գուգարաց կոչումը և առաջնորդում հայոց հիւսիսային բանակը. Եւ երբ Տրդատի մահից յետոյ Հռովմէացոց Անտիոքոս զօրապետն եկաւ հայաստան Տրդատի որդի Խոսրով Բ. թագաւորացնելու, (344 թ.). Նա վերահաստատեց Միհրանին վրաց թագաւոր և բգեշխ Գուգարաց, առաջնորդ հիւսիսային բանակի: Այս Միհրանը, որ ս. Խունէի քարոզութեամբ ընդունել էր քրիստոնէութիւն (318 թ.), մեռաւ այն պատերազմում, որ նա փաթեց հայաստան խուժող Հոների և Աղանների դէմ՝ որոնք մինչև Վաղարշապատ հասան, բայց կարճ միջոցում յետ քշուեցան: Միհրանի փոխարքէն հիւսիսային բանակի առաջնորդ և Գուգարաց բգեշխ կարգուեց Գարջով Մալիսազունին կամ Գարջով Մալիսաս Խորխունին \*\*):

\* Brosset o. c. եր. 71.

\*\*) Մ. Խոր. Դիբք Դ. գլ. թ.

Ես տանից էր Մանասղ Խորիսութեան, որ Զօրոց իշխան Գորութիւն և ուրիշների հետ 356 թ. ուղեկցեց Յուսիկ կաթուղիկոսին Կեսարիա<sup>1)</sup>, Յայտնի չէ, թէ այս Գարջով Մալխագունի բդեշխը, թէ մի ուրիշն էր, որ Ծրշակ Բ. թագաւորութեան (364—382) միջոցին ապստամբուեց, որի պատճառով և Մուշեղ գօրապետը յարձակուելով նրա վրայ՝ բռնեց նրան, զլիսատեց և արու զաւակներին կորի տարաւ, պատանդներ առաւ և մնացածներին հպատակեցրեց: <sup>2)</sup>

Այնուհետև մինչև Ն. դարը յենք պատահում Գուգարաց բդեշխների, միայն Վարդանանց պատերազմի ժամանակ հանդէս է գալիս Աշուշա բդեշխը, «այս խելացի և խորհրդական»: <sup>3)</sup>

Սա հրաւիրեց ո. Մեսրովին վերացնելու Տաշիրում տարածուած կռապաշտութիւնը, և նա գալով (424 թ.) արմատախիլ արաւ չարիքը և երկրի հոգատարութիւնը յանձնեց Սամուել Եսլիսկոպոսին: Հայոց նախարարների և վրաց ու Աղուանից թագաւորների հետ Աշուշա բդեշխն էլ կանչուեց Յագիերտ Բ.-ի մօտ. և սա էր նախարարներին խորհուրդ տալիս, որ երեսանց ուրանան քրիստոնէութիւնը, որպէս զի կարողանան հայրենիք վերադառնալ և պաշտպանել անտէր ժողովուրդը. Բայց երբ նախարարները նրա խորհուրդին հետեւելով վերադարձան, Յագիերտ Բ թոյց յրուեց նրան, ինչպէս և վրաց ու Աղուանից թագաւորներին, վերադառնալ և պահեց իւր մօտ <sup>4)</sup>:

Եւ երբ 455 թուին նա իրաւունք ստացաւ վերադառնապու, մեծամեծ ընծաներ տալով կարողացաւ վերցնել իւր հետ իւր փեսայակից հմայեակ Մամիկոնեանի (Վարդանի եղբօր) Վահան, Վասակ և Սրտաշէս որդիներին, որտոց Վասակը Պարսկաստան էր ուղարկել, որ պէս մահապարտի որդիներ մահուան դատապարտելու. Աշուշան բերեց նրանց Գուգարք և յանձնեց նրանց մօր, Զուիկին, որ ապրում էր իրենց մօտ. նրա քոյց Անուշվամբ՝ Աշուշացի կինն էր:

Հաւանականօրէն Աշուշացի մահից յետոյ վրաց Վախթանգ Առաքասլանը (446—499) իւր թաղաւորութեան վերջին օրերում բաժանելով Վրաստանը իւր որդիների և էրիստաւների մէջ՝ վերացրեց. Գուգարաց բդեշխութիւնը՝ տալով Զամշվիլիէն՝ էրիստաւ Աղորկազին, Կարջքը՝ Արտավազին, Շունդան՝ Նաղարին <sup>5)</sup>:

Այնուհետև այս նահանգք, ենթարկուելով վրաց իշխանութեան, կառավարուեց մի քանի էրիստաւներով, մինչև որ արարացիները

1) Բիւզ. դպ. Դ. գ. Ժ.

2) Բիւզ. դպ. Ե. գ. Ժ.

3) Ղազար. Ղեն. 165.

4) Ղազար Փարք. եր. 191.

5) Brosset o. c. Ip. 200.

տիրապետելով հայաստանին և Վրաստանին, տիրեցին և՛ Գուգարքը Այս ժամանակուանից մինչև Ժ դարը Գուգարքը մի առանձին իշխանութիւն, մի առանձին միութիւն չկազմեց, այ որպէս ենթակաչ երբեմն վրաց, երեմն արարացւոց, երբեմն հայոց, նա նոյն այդ երկիրների վիճակն ունեցաւ, միայն երբեմնապէս տեղի ունեցան մի քանի նշանաւոր անցքեր, որոնք հարկ ենք համարում լիշել ժամանակագրական կան կարգով, որովհետև հէնց այս անցքերն էլ ցոց են տալիս, թէ ինչպէս Գուգարքը բազմաթիւ ապստամբութիւններով ձգտում էր մի անկախ իշխանութիւն կազմելու, որին և հասաւ Կիրիկեան թագաւորութեամբ։ Օրդ՝ 782 թուին Սմբատ Բագրատունու որդիները մաքրեցին արաբներից նախ Տաշիրն ու Ծոցը և ապա հայկական այ դաւառներ, բաց շուտով այս բոլորն էլ նորից ընկան արարացիների տիրապետութեան տակ, և ենթարկուեցան բազմաթիւ արշաւանքների և անսորդոր կոտորածների։ Մրանցից պէտք է լիշել նուրայի արշաւանքը 850 թուին, որ ահազին աւերումներ և կոտորածներ գործելուց յետոյ, բազմաթիւ գերիների հետ Բաղրատ տարաւ Սևորդեաց Ստեփանոս Կոնին, որ քրիստոնէութիւնը չուրանալու համար՝ նահատակուեց բանտում 854 թուին։

Եյնուհետև հայաստանի հետ Գուգարքն էլ հարկ էր վճարում Բաղրատի ամիրապետին, Գուգարքի հիւսիսացին մսուր՝ Կղարջքը, Թաւախը, Թռաեղքը, Կանգարքի, Մորոփորի մի մասը և առհասարակ Դերեղ գետի ձախ կողմն ընկած երկիրները իրենց վրայ դրուած հարկը յանձնում էին Թիֆլիսի ամիրացին։ Կողրոփորը, հաւանականօրէն ընկնում էր Գանձակի ամիրայի շրջանում, իսկ Տաշիրը, Զորոփորը և Օրդահանը ենթարկում էին հայաստանի ամիրային, որ Դուին էր նստում։

Այս ժամանակներում Բագրատունիք հետգհետէ զօրացան, և շատ երկրներ ձեռք բերին, որոնց մէջ և Տայքն ու Գուգարքի մի մասը Այս ցեղից մինը ամուսնացաւ Վախթանգ Ղուրգավան թագաւորի դատեր հետ և սրա սերունդն ստացաւ բացի Տայքի հիւսիսացին մասից, նաև Գուգարքից Կղարջքը, Թաւախիքը և Թռաեղքը (Թրիալէթը)։ Այս ցեղը հետզհետէ զօրանալով տուեց շատ նշանաւոր մարդիկ և նոյն իսկ թագաւորներ, որոնցից առաջինն եղաւ Ծոտ 1, որ բարձրացաւ վրաց գահը 787 թուին։

Նոյն բաղդին արժանացան Բագրատունիք և հայաստանում, Աշոտ Շ. (885 թուին) հիմնելով Բագրատունեաց հարստութիւնը, նուաճեց նաև Գուգարքը։

889 թուին մեռաւ Աշոտ թագաւորը, և նրա Սմբատ որդին, որ դեռ ձամշվիլէումն էր գտնւում, Գուգարքի վրայ կառավարիչ նշանակեց

Գնթունեանց ցեղից Գասակ և Աշոտ եղբայրներին և ինքը վերադառնա, գահ բարձրանալու:

896 թուին Ստրպատականի կառավարիչ Օշինը Ռւտիով անցնելով ամէն կերպ աշխատեց Գուգարքի բնակիչներին ապստամբեցնել Սմբատ թագաւորի դէմ, Բայց սրանք չենթարկուելով նրա ներշնչումներին՝ ինքեանք հաւաքուեցան անմատչելի ամրոցներ, որպէսզի սրանով ստիպէին Օշինին թողնել երկիրը: Նա պաշարեց Քաւախսքում Տմոկվի և Կվէլի բերդերը, բայց անյաջող, Ռւտիի Օշինը վերադառնաւ Վանանդ (Կարսի գաւառակը):

899 թուին Օշինը նորից եկաւ Թիֆլիս և այսուելից Գուղարքի վրացով անցաւ Ջիրակ:

Ըստ ժամանակի Օշինը յարձակուեց Սևորդեաց նահապետ Դէորդի վրայ և նրան անպատճաստ գտնելով՝ գերեց իւր Ծրուէս եղբօր հետ, տարաւ Փայտակարան, ուր նրանց նահատակեց քրիստոնէութիւնը չուրանալու պատճառով:

Օշինի մահից յետոյ Ստրպատականի ամիրայ դարձաւ նրա եղբայր Ցուսպուիը, որ թշնամանալով Սմբատ թագաւորի հետ՝ 902 թուին անծիացաւ Փայտակարանով և Ռւտիով Տաշիր՝ Տաշրատափ:<sup>1)</sup> Սյբատը լսելով այս մասին՝ բռնեց Տաշիրի և Աշոցի նեղ անցքերը՝<sup>2)</sup> արևելեան կողմից, սակայն Ցուսպուիը տեղեկանալով այդ մասին, շտապեց անցնել Հարաւ-արևմտեան կողմից և մտաւ Ջիրակայ դաշտը:

904 թուին Հայաստան արշաւեց Երիսազաց Կոստանդին թագաւորը և տիրեց Գուգարքին, բայց Հայոց և Վրաց զօրքից յաղթուեց և գերի բնկաւ.

907 թուին Սմբատ թագաւորը հանգիստ ապրում էր Տաշիրում, երբ մի քանի հայ նախարարներ, վրաց Ցորներսէն թագաւորի հետ նրա դէմ դաւադրութիւն կազմեցին և մարդ ուղարկեցին նրան ըսպանելու, բայց թագաւորն այդ իմասնալով ուղևորուեց Ջիրակ, և ջարդեց ու ցրուեց դաւադիրներին: Ցուսուիք Ցուսուիք նորից մտաւ Հայաստան և Սմբատ թագաւորն իրեններից թողնուած, 909 թուին իւր զօրքով անցաւ Գուգարք, Օձուն գիւղը և ապա թագնուեց Կղաք-քի անմատչելի այցերում<sup>3)</sup>, Ցուսուիք վերադառնաւ Դուին, վերցրեց իւր հետ Ցովիաննէս կաթուղիկոսին, իսկ Սմբատ թագաւորը Գուգարքից անցաւ Ջիրակ:

910 թուին Հայոց Ցովիաննէս կաթողիկոսը կարողացաւ փախչել Ցուսուիքի մօտից Եղուանից երկուով Գուգարք, ուր և երկար ապրեց, Հաւանականօրէն Օձուն և Երգուէ գիւղերում:

<sup>1)</sup> Տաշրատափին այժմ Ջիլդի է կոչւում:

<sup>2)</sup> Հաւանականօրէն այժմեան Հարբաքիլիսու և Դվագլի անցքերը:

<sup>3)</sup> Ցաղկիկ եր. 112.

Ըստ միջոցներում Սմբատը հաւաքեց իրեն հաւատարիմ մնացած նախարարներին, և իւր որդիների առաջնորդութեամբ ուղարկեց Յուսուփի վրայ. Սմբատի հետ միացաւ և Սևորդեայ ցեղը, բայց հէնց առաջին կռւում Սևորդեանք դաւաճանեցին թագաւորին և իրենք յանձնեցին Յուսուփի ձեռքը իրենց առաջնորդ՝ Մուշեղ արքայորդուն:

911 թուին Յուսուփի զօրք ուղարկեց Տաշիրը և Կանգարքը ասպատակելու. ՚Ի վերջոյ Յուսուփի կուրը Սմբատի հետ վերջացաւ Նրանով, որ Սմբատը դերի ընկաւ և զյսատուեց Գուլնում. Նրա մարմինը բերէն Օձուն և ամփոփեցին եկեղեցու մօտ, ուր մինչեւ այժմ էլ կանգուն է մահարձանը \*).

Օռւտով Հայաստանն ենթարկուեց Յուսուփին, բացի Գուգարքի մի քանի անմատչելի տեղերը, ուր այդ ժամանակ թաք էր կենում Սահակ Սիսակիանը,

Սմբատի մարտիրոսական մահից յետոյ, նրան յաջորդեց նրա որդին՝ Սեռտ Երկաթը: Սա շուրջն հաւաքելով իւր քաջերին, սկսեց հաշածել Հայաստանից արարներին և 914 թուին մաքրելով Գուգարքը նրանցից՝ յանձնեց Նախակին կառավարիչներին՝ Վասակ և Սշոտ Գունթուներին: Ապա անցնելով Թիֆլիս և Աւտի, կրկին եկաւ Տաշիր, որ իմանալով, որ Կողբագորում (Ըզստավա) դեռ ևս մնացել են արարներ, շուապեց նրանց ևս դուրս քշելու հայց երկար չունեցին Եշոտ Երկաթի յաջորդութիւնները. Նախարարները թողին նրան և սկսեցին միննեանց դէմ կուներ վարել, Երկրը մնաց անպաշտպան: Եզդ ժամանակ, այն է 917 թուին, նորից Յուսուփի զօրքերը մտան Հայաստան, և աւերելով Երկիրը՝ բնակիչների մեծ մասին գերի տարան Յուսուփի մօտ, որ անգթաբար զյսատել տուեց հաւատը չուրացողներին: Ըստ պէս զյսատուեց մի 17 տարեկան գեղեցիկ երիտասարդ Գուգարքից, Մոլքայէլ անունով, որ միանցաւ մահմեդականութիւն ընդունել: Հայաստաննեաց եկեղեցին միւս մարտիրոսների հետ յիշատակում է նաև այս Միլքայէլին.

Ըստ միջոցին Հայաստանի հարևան աղքերը՝ արխակներն ու Կովկասեան լեռների բնակիչները, ինչպէս և իրենք Գուգարքի և Ռւտի գաւառի Հայերը, օգտուելով Հայաստանի անխչանութիւնից, սկսեցին թալանել ինյապէս Հայաստանի անպաշտպան գաւառները, այնպէս և մէկը միւսին: Ըկանատես մատենազիր Յովհաննէս կաթողիկոսի ասելով անհնարին էր այդ ժամանակներում անցնել Գուգար-

\* Տես Յձւակի Խաչվոնտ եկեղեցու Նկարագրութեան մէջ:

քով և Ռւտիով. թաղանում էին ամէն բոպէ և կրակի մատնում տըներն ու կացերը. Այս բոլորի հետևանքն եղաւ սով և երկրի աւերումն:

Այս միջոցին Ծշոտից կարգուած Գուգարքի Վասակ և Ծշոտ Գնթունի կառավարիները Գուգարքի բնակիչներին ապստամբեցրին թագաւորի դէմ և 921 թուին իրենց անկախ հրատարակեցին: Ծշոտ Երկաթ թագաւորն իւր եղբայր Շբասի և ուրիշ նախարարների հետ մտաւ Գուգարք և պաշարեց Ջամշուլդէ: ամրոցը, ուր թաքնուած էին Գնթունի նախարարները: Պաշարումն անյաջող անցաւ, թագաւորական գօրքի պաշարը հատաւ և Ծշոտ ստիպրւեց բաց թողնել իւր գօրքը շրջակացը ուտեսու գտնելու: իսկ ինքը 250 մարդով հեռացաւ Ասուրէտ<sup>\*</sup>) ամրոցը: Վասակ և Ծշոտ Գնթունիները տեսնելով, որ Ծշոտ թագաւորը մեկնեց իրենցից, ցրուեց գօրքերը զանազան գաւառներ և առանձին մնացել է Սոսուրէտի մօտ, ծածուկ պատրաստութիւններ տեսան, մօտ չորս հազար մարդ վս բացցին Կովկասի լեռնականներից և Թիֆլիսի գօրքերից և յանկարծակի յարձակուեցան Ծշոտ թագաւորի վրայ:

Ծշոտ այսպիսի անակրնկալ յարձակման ենթարկուելով շուարեց, բայց յետոյ քաջացաւ, քաջալերեց լւր երկու հազար մարդկանց. և ընկնելով սրանց վրայ, արիաբար որին սրէ անցկացրեց, որին զերի բռնեց. ապա անհաւատուների ականջներն ու դունչը կտրեց, իսկ քրիստոնեաներին մերկացրեց և արձակեց: Միայն Վասակը մի քանի մարդկանցով կարողացաւ փախչել և ամրանալ Ջամշուլտէում: Այս ժամանակ Ծշոտ թագաւորն իւր եղբայր Արասի հետ գնաց Տփխիսի մեծ իշխան և իւր սիրելի Գուրգէնի մօտ: Ացտեղ ինքն իրեն եկաւ Վասակ Գնթունին և խնդրեց ներել իրեն: Ծշոտ թագաւորն էլ ներողամիտ եղաւ և կրկին հաստատեց նրան իւր եղբայր Ծշոտի հետ Գուգարքի վերակացու: Կարճ ժամանակից յետոյ Վասակի եղբայր Ծշոտ Գնթունին օտարազգի թշնամիների դէմ վարած պատերազմու մ մեռաւ և այնուհետև միայն Վասակը տիրապետեց Գուգարքին:

Սակայն Վասակ նորից մտածեց ապստամբել Ծշոտ Երկաթից, անձնատուր եղաւ արխազաց Գուրգէն: մեծ իշխանին և խոստացաւ յանձնել նրան իւր ամրոցը, միայն թէ նա ևս տայ իրեն մի ուրիշ ամրոց իւր երկրի մէջ, Գուրգէն այս յետկարի համաձայն պահանջեց նրանից բերդը, և Վասակ յանձներով բերդը իւր մի քանի ազգականների, գնաց Գուրգէնի մօտ, որ արդէն գօրքն առած դէպի իրեն էր գալիս: Նրան պատահելով՝ Վասակը միացաւ նրան և եկաւ յետ, դէպի ամրոցը հերդապահները զարմանալով Գուրգէնի այդպէս արագ:

<sup>\*</sup>) Այժմ կոչւում է Ազգայի Ախալցիամի մօտ է:

վերադառնալու վրայ, կասկածեցին և բայ չարին դուռը, այ խնդրեցին, որ թու տայ միայն Վասակին ներս մտնելու և ապա նրա հաւանութեամբ կարող են ցանձնել բերդը, որովհետեւ, ասում են, մենք իրաւունք չունինք առանց նրա հրամանի բերդը մինին ցանձնելու: Գուրգէնը պնդելով իւր ասածի վրայ, կամննում էր պատերազմով առնել բերդը:

Այս տեսնելով բերդակահները շտապով պատզամաւորներ ուղարկեցին Աշոտ թագաւորի մօտ և ի մացրին նրան եղելութիւնը. Նա էլ զօրքն առաջ շտապով եկաւ այլտեղ, Եւ երբ Գուրգէնը լսեց, թէ Աշոտը գայիս է, շտապով փախստ այնտեղից, տանելով իւր հետ և Վասակին: Պահապանները տեսնելով Գուրգէնի փախումոր, Աշոտի առաջն էլ բայ չարին դուռը և ասացին, թէ չեն կարող ոչ ոքի ընդունել, քանի որ Վասակը իրենց մօտ չէ:

Աշոտը այս բանի վրայ զարդարած օլաշարեց ամրոցը և յարմարժամի էր սպասում այն առնելու: Այս պատճառով քաղաքացիները թշնամացան Աշոտի հետ.

Եւ որովհետեւ այդ ամրոցը յետևից ծածուկ դուռն և անխուլ ճանապարհ ուներ, ուստի այնտեղից Գուրգէն իշխանը մի պատզամաւոր ուղարկեց ներս և ծանր երդումով խոստացաւ նրանց տալու Վասակին, եթէ ցանձնեն իրն ամրոցը. Եւ ես, ասում է, քշելով այստեղից Աշոտին, կազմատեմ ձեզ բոլորիդ նրանց, ապա թէ ոչ նա կը կոտորէ բոլորիդ և ես էլ կ'սկանեմ Վասակին: Այդ ժամանակ բերդապահները փախսնալով, թէ մի գուցէ չկիշանին Գուրգէնի խնդրին, նա յիրաւի սպանէ Վասակին, վերադարձրին պատզամաւորին և խնդրեցին Գուրգէնին, որ զօրք ուղարկէ, տիրէ բերդին և հարածէ այնտեղից Աշոտ թագաւորին: Գուրգէն այս խոստումը առնելով քաղաքացիներից, երեք հարիւր մարդ ուղարկեց, որունք այդ գաղտնի ճանապարհով ներս մտնելով, սկսեցին կոտորել բերդ ապահներին: Եւ երբ այս տեսան բերդի բնակիչները՝ պահուեցան. և վերնաբերդը բարձրանալով սեսեցին կը ռուել Գուրգէնի զօրքի հետ, աշխատելով դուրս քշել նրանց բերդից:

Խոկ Աշոտն այս մասին ոչինչ յգիտենալով, կարծում էր, թէ ամրոցի միջի մարդիկն են միմեանց կոտորում: Եւ որովհետեւ նա չէր կարող կուռել բերդի մէջ եղողների հետ, որովհետեւ պարիսպը խանգարում էր, ուստի և սկսեց կուռել վերնաբերդի մէջ եղողների հետ և շատ նեղում էր նրանց, այնպէս որ նրանք չէին կարողանում այ ևս կուռել Գուրգէնի զօրքի դէմ: Ուստի սրանք սկսեցին բոլոր ճաշնով աղաղակել և ասել Աշոտին, թէ Գուրգէնի զօրքերը բերդի մէջ են և իրենք նրա համար են կուռել և ոչ ուրիշի:

Երբ լսեց այս Աշոտը, շատ զարմացաւ և կանչեց նրանց թէ,

եթէ լնձ համար էք պատերազմում, ինչ չէք բաց անում բերդի դուռը, որ ես էլ ներս մտնելով հեշտութեամբ կարողանանք վերջացնել պատերազմը, և ես վարձատրեմ ձեզ, ինձ համար պատերազմելու համար։ Եւ երբ բացին դուռը, Ծշոտի գօրքերը ներս մտան և մի ակնթարթում ձերբակալեցին Գուրգէնի գօրքը։ Եւ որովհետեւ նրանք կապանքների մէջն անգամ լուռ չէին կենում, և վաս էին խօսում Ծշոտի մասին, ուստի և Ծշոտ հրամայեց հանել նրանց աշբերն և կորել նրանց ականջներն ու դունչերը և այնպէս ա, ձակել Գուրգէնի մօտ։

Այսպիսով Ծշոտ Երկաթը նորից հպատակացրեց իրեն Գուրգէնին։

Սակայն այս ազատասէր երկիրը բոլորովին լընկճուեցաւ և կարծ միջոցից յեռոց, Ծշոտ Աղորմանի ժամանակ նորից անկախութիւն ձեռք բերեց և առանձին թագաւորութիւն կազմեց, կիւրիկեան հարաստութեամբ։

### ԿԻՒՐԻԿԵԱՆ ԹԱՂՄՈՒՈՐՈՒԹԻՒՆ

Կիւրիկեան թագաւորութեան հիմնադիր համարւում է Աշոտ Աղորմանի կրտսեր որդի Գուրգէնը կամ Կորիկէ Շ. որ հօր մահից յետով ժառանգեց Յաշիրը, Կայեան, Կայծոն, Խոշունի, Խոռակերտ, Բաղկերտ և ուրիշ անուանի բերդեր։ Մինչդեռ իւր աւագ եղբացը Սմբատ Բ. թագաւորում էր Անիում, սա իրեն թագաւոր հրատարակեց (982թ.) և սկսեց առանձին դրամ կտրել, որոնցից մի հատ Խուդաբաշեվը նույիրել է Պետերբուրգի Ասիական թանդարանին, Այս դրամը առաջին անգամ նկարագրել է Մ. Բրոսասէն իւր «Monographie des monnaies d'Arménie», (S. Petersbozorg 1839). և յետով Անգլուան իւր «Numismatique générale de l'Arménie» (Paris 1859թ.) աշխատութեանց մէջ։ Սա պղնձից է, առաջ ն երեսում տեսնեում է Ցիսուս Պրիստոսի անդրին, ամբողջ դէմքով, զլիսի շուրջը ճանանչ և ձեռին մի զիրք՝ հուանաւ կանորէն՝ Եւեստաբանը բռնած. զլիսի երկու կողմում ՅՅ ՔՅ է դրուած, վերև կրճատման պատիւ։ Միւս երեսում որոշ կարդացւում է միայն

+ ՏՐ ԱԴ

ՆԻ ԿՈՐԻԿ

Ի ԿՈՐԱ...

Ա...

այսինքն Տէր օդնեա Կորիկի կոր..ա ..

Բրոսասէ, այս դրամը Կորիկի առաջինին է համարում, որտիհետեւ «օրա ձեւ միանդամայն յիշեցնում է Թամարի հայր Գևորգիի և Գի-